36. **Պետրոս Հատիճեցի**։ — Ազգական նշանաւոր Ոսկան Վ.ըդ.ի որմէ՛ ստացած է եղեր անոր տպարանին մէկ մասը : — Կաթոլիկ կղերն Իտալիայէն Պօլիս կը դրկէ գինք՝ տպարան բանալով «բրօբականա»ի գործը հետապնդելու համար : Պետրոս **1704**ին կը հիմնէ այդ տպարանը՝ Բերա, **ի բաղն Պէկօղլի** (ինչպես կը կարդանք նոսկէ յոյս ընծայուած գիրքերուն ճակատը), որ հազիւ 10 տարուան գոյութիւն մը կ՛ունենայ, հրատարակելով հետեւեալները. — Բուբաստան աղօթից (Բ. տիպ, լատիներէնէ բրգմ. Ստեփաննոս Վ. Լենեցի **1704** : — Աստուածաշունչ (Ոսկանեան մանր գիրերով, պատկերազարդ, բայց անյաջող տպագրութիւն՝ արուեստի տեսակէտով), **1705** : — Գիրք ուսմարաց, **1709** : — Առենի ժամագիրք, **1712** :

37. **Թօխաթցի Աբդիս Վրդ.**, «պատճառ տպագրութեան և սրբագրութեան **Լուսաւաւիղի** (**1704**) զոր երկասիրած է Ամասիացի Գալուստ Վ.րդ. :

38. **Յակոբ** (**Գենեւացցի Վարդանի որդի**)ի «հոգաբարձութեամբ և ծախիւք» **1710**ին տպուած է **Առենի Աւետարան** մը (Բ. տիպ) որուն յիշատակարանն կը բաղնենք հետագան. «. . . . Այլ և յոյժ աշխատեալ ի վերայ առդիցն, որ ունէր գիրս այս մերձ առ մերձ լեալ՝ զայս եւս ընդարձակեալ անջրպետական միջնորմովն նրբականօք բացագատեալ. . . : . . . յիշել զմաքրափայլ աղօթս ձեր զազնուատոհմ և զբարեպաշտ գնորհատակ և ծաղկածաւալ զԳենեւացցի Վարդանի որդի Յակեարն, և զբազմահանճար և նրբայարհնաս գնոգեւոր եղբայրն Շոռուքեցի Բարաքիսի որդի զՄինաս դպիրն, որք ամենայն ջանիւ, արդեամբք և գոյիւք ի յոյս հանին զգեղեցկագիր ըզաստենի գսուրբ աւետարանս այս» :

39. **Ձէոր եւ. անկատար Տպարան**էն **1735**ին յոյս ընծայուած է Համդեցի Մինաս վրդ.ի **Ազգաբանութիւն** «բազաւորացն Հայոց, յորդւոց որդի, համառօտեալ ի Մովսիսէ Խորենացւոյ» անուն Հայոց Պատմութիւնը զոր հեղինակը 1693ին գրած է : — Առոր Բ. տիպը Վաղարշապատ հրատարակուած է 1870ին :

40. **Տիրացու Բարսեղ եւ. Ծակոբ**։ — Սեբաստացի երկու եղբայրներ էին «ծաղկարար», տպարաննին «ընդ հովանեաւ Ս. Ած.ածնի բազմահաւաք եկեղեցւոյ» Կոյսս Ծովն. պատրիարքի օրով բացած **1735**ին և զայն կոչած **նարակազմ**: Մինչեւ **1740**, իրենց տպած 4 գիրքերուն Յիշատակարաններուն մէջ երկուքին մէկ յիշուած են. այնուհետեւ միայն Բարսեղը կը մնայ որ **1755**ին արդէն մեռած էր, բայց տպարանը գոյութիւն ունէր և նոն աշխատող իր գաւակներն էին ԳԱԲՐԻԷԼ (որ առանձին ալ գործած է), Ած.ատուր, ՍԱՐԳԻՍ և ՄԻՔԱՅԷԼ (վերջին երկուքն ալ առանձին գործած). իսկ «Սպառկերացի Խոնեմ Յովհաննես» և վերջինին Մանուէլ գրաշար էին նոն : — Բարսեղի տպարանէն հրատարակուած գիրքերն են. — **Էր ընդ եղբարս** (Տեսութիւն աղօթից պատմութեան բանից ննջման. . . աւետարանչին Յովհաննու) : — Շարակնոց : **Աւետարան, 1740** : — **Խոտա հոգեկան** (Ֆրնս.է բրգմ. Ճամճի օդլու Յակոբ գպիր), **1736** : — Գիրք որ կոչի **Լուծիչ տարակուսացաց** (հեղինակ՝ Սրմաքիչ Մանուէլ Կեսարեան Կ. Պօլսեցի), **1755** : — **Տետրակ տօնացուցի** (Օրացոյց) **1776 - 7** :